

82. ԽԵԼՔ ԾԱԽՈՂԻ ՀԵՔԻԱԹ

Թագավոր մե մըջ ուր քաղքին կը զվոններ, կը տեսնա, օր դուքնի մե ճակտին գրուկ է՝ ձեռք կը ծախիմ: Կը մտնա ներս, դուքընչուց կը հարցու.

— Օգորդմա՞ն խելք կը ծախիս:

— Հա՛, — կըսե դուքընչին, — Թագավոր ապրած կենա, խելք կը ծախիմ:

— Ի՞նչ կաժե:

— Յիսուն օսկի:

— Ա՛ն քըզի չիսուն օսկի, տուր զխելք:

— Գնա՛, — կըսե դուքընչին, — վազ գիկաս կը տանիս:

Օլոր օր Թագավոր գիկա գուր գնած տանե:

Դուքընչին կըսե.

— Ինչ կէնիս՝ մտածելով էրե, ըշտե իմ ապրանքն էդ է:

Թագավոր կը ծիծղա, կը տեսնա, օր խաբվեր է, կէնե ուրին առվորութեն՝ նստեր, կաներ, ուտեր, թե խմեր, կըսեր ու կը ծիծղեր. ձեռք կէնիս՝ մտածելով էրե:

Թագավորի կնիկ կսիրեր զվազիր: Խոսքեր ուրանց կէնին մեկ, օր բառբառին բան մե փարա տան, թրաշվելու ժամանակ բառբառ զարծլին թալե, զԹագավորի բոկ կտրե, վազիր դառնա Թագավոր:

Թրաշվելու օր բառբառ ներս կը մտնա, օր զԹագավոր թրաշե: Վազիրն ու Թագավորի կնիկ կը պալտըվին փարտի չետե, օր ինչ է, Թագավորի վիզ կտրվելու պես՝ կորցուն, վազիր լե չելնա նստի վոր թախտին, էղնի Թագավոր:

Բառբառ զարծլին կառնե ձեռք, օր մոտենա Թագավորին, Թա-

գավոր զուր սորված խոսքեր էլման կըսե. «Ինչ կէնիս՝ մտածելով էրե՛ս, Բառբառ հմա կը ճշա, գընկնա թագավորի յոտաց վրեն».

— Ես մեղավոր չիմ, քոս կնիկ ոս վագիրն ին զէդ խորհուրք էրած: Ես մեղավոր չիմ...

Թագավորի մարդիկ վրա կը հասնին, գբառբառ կը բռնին, գընցնան փարտի յետև, գվաղիրն ու կնիկ լե կը բռնին, եբ կը քննե ոս դիմնա յըմեն բան, գըմնու գլուխ լե կիտա գարկել:

Թագավոր գելնա կէրթա դուքնչու մոտ, հարիր օսկի լե կիտա, կըսե.

— Օղո՛րդ օր խելք կը ծախիս, քու ծախած խելք մարդ կը փրկե: Թըղ մարդիկ սորվին քու խոսքեր՝ բան մե էնելուց յառե՛ս՝ մտածին, նոր էնին:

